Մենք ի բոլոր սիրտ բարեմաղթումենք Նորան այն երկնային Հանգիստը, որ վիճակել է Աստուած իւր ընտրեալներին։

Մ.

«Արևելքում» կարդում ենք.

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն շնորհակալեաց ուղերձ մը ղրկած է կայսերական Պալատան քարտուղարութեան Վեհ. Սուլթանին մատուցանելու համար, որով երախտագիտական ջերմ զգացումներ կարտայայտէ առ Նորին Վեհափառութիւն, որ բարեհաճած է իւր կայսերական բարձր հովանաւորութիւնը շնորհել Միացեալ Ընկերութեանց ձեռամբ խնամեալ վարժարանաց ի Նպաստ տրուելիք պարահանդէսին։

—Ամեն. Ս. Պատրիարք Հայրն փետրուար 26 ին Կայսերական պալատ գնաց և նախ առաջ ընդունուեցաւ երկրորդ Սենեկապետ Հաճի Ալի Պէյի կողմանէ։ Նորին Ամենապատուութիւնը յետոյ պատիւ ունեցաւ ներկայանալու Վեհ. Սուլթանին, որ յոյժ սիրալիր կերպիւ ընդունեց զնա։

—Վեհափառ Կաթողիկոսն օրհնութեան կոնդակ մը ուղղած է Նորընտիր Քաղաքական Ժողովոյ անդամոց։ Հայրապետական կոնդակն փետրուար 18 ին ի պատրիարքարան հասած լինելով, յաջորդ աւուր նստին մէջ հանդիսաւոր կարդացուեցաւ։ Ամեն. Նախագահն և բոլոր ժողովականք յոտընկայս լսեցին Հայրապետական կոնդակի ընթերցումը։

—Երուսաղէմէն կըգրեն փետրուար 10 թուականաւ թէ Ս. Յակոբայ վանուց սեփականութիւն եղող գետնէն 12000 կանգուն տեղ Միաբանութեան կողմէն վաճառուեցաւ Գերմանացի սեղանաւորի մը։ Այս գումարով գետնին միւս կողման վրայ տներ պիտի շինուին։

Մեծ. Պ. Բժիշկ Արամեանը խնդրումէ հրատարակել ի գիտութիւն հայ հասարակութեանց, որ ինքն հաւաքած ունի զանազան գրուածքներ և վկայաթղթեր, որոնք վերաբերում են Հնդկահայ գաղթականութեան։ Նա մտադիր է տետր առ տետր հրատարակել երբեմն նշանաւոր եղած այդ հայ գաղթականութեան պատմութիւնը, քաղելով իւր ունեցած նիւթերից։ Այդ երկասիրութիւնը կկրէ «Պարսկա-Հնդկական Հնագարան» վերնագիրը։ Պ. Արամեանը մտաւորապէս հաշուումէ, որ իւր ունեցած նիւթերը կրկազմեն 30—40 տետր, իւրաքանչիւրը 3—5 տպագրական թերթից բաղկացած։ Բայց որպէս զի այս գործը, որքան հնար է կատարեալ լինի, պատուելի բժիշկը խնդրումէ նոցա, որոնք ունին որև է գրաւոր վկայութուղթ վերաբերութեամբ Հնդկահայ գաղթականութեան, բարեհաճեն ուղարկել այն իրան։ Նա իւր ունեցած նիւթերը ստացել է Մեծ. Պ. Գ. Շիրմազանեանցից, որին յայտնում է իւր խորին շնորհակալութիւնը հրապարակաւ։ Ով կցանկայ տրտասահմանից, Հնդկաստանից, Պարսկաստանից,

Տաճկաստանից և կամ որև է այլ տեղից ուղարկել Պ. Բժ. Արամեանին որ և է կարևոր թէ տպագրեալ և թէ անտիպ նիւթ, վերոյիշեալ պարկայի մասին. թո՛ղ բարեհաճի ուղարկել հետևեալ հասցէով.

Caucas (via Batum) Saliani, Aramiantz

Մեծ. պ. Մ. Բարխուդարեանցը խնդրումէ հրատարակել հետևեալը.
Ներկայ 1888 թուին լոյս կըտեսնէ Մոսկուայում
«Հանդէս Գրականաց և Պատմաց»
երկհատոր ժողովածուն. Այս հրատարակութիւնը, որին մասնակցելու են մեր գրականութեան մէջ անուն ժառանգած հեղինակներ, ինչպէս Գամարջիանց և ուրիշները, նոյնպէս և շատ նոր ուժեր, պիտի բովանդակէ. վէպեր, պատկերներ, զրոյցներ, բանաստեղծութիւններ,—թէ ինքնուրոյն և թէ թարգմանական,—պատմական, քննադատական, մատենախօսական յօդուածներ, գիտութեան այս կամ այն ճիւղից մատչելի լեզուով քաղուածներ և այլն.

Առաջին գիրքը բաղկացած կը լինի 300 երեսից և լոյս կըտեսնէ յունիս ամսին. Բացուած է սստորագրութիւն միայն առաջին հատորի համար, որի բաժանորդագինն է Ռուսաստանում մէկ բուբլի յիսուն կոպէկ. իսկ արտասահմանի համար 4 ֆրանկ. Երկրորդ հատորի մասին առանձին յայտարարութիւն կը լինի, որովհետև մեզ դեռ ինքը ընդլայնելու.
Հրատարակչի հասցէն. Москва. Большая Дмитровка. меб. Ком. «Версаль», № 27.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

3 Փետրուարի. Սինոդից Գերապ. Գրիգորիս Եպիսկոպոս Աղուանեանցի տեղը Կարսի փոխանորդ նշանակուեց Բարեշնորհ Յուսիկ Վարդապետ Մովսիսեան. Կարսի շրջակայքում եղած Բուլանուղ, Ղևյուղուղ, Գեօրխանայ, Ներբին-Գեադիքլար և Գարմալու գիւղերի նոր եկեղեցիների շինութիւնն աւարտուած լինելով, նոցա օծումն էլ յանձնուեցաւ յիշեալ փոխանորդին.

---

5. Փետրուարի. Ճեմարանը, իւր ննջարանովն և հիւանդանոցով ապահովել տրուեցաւ Հրդէհի դէմ Ս. Պետերբուրգի ընկերութեանը 75000 բուբլով, իսկ ճեմար. մատենադարանն և կահկարասին—25000 բուբ. Տարեկան պէտք կլինի վճարել ապահովող ընկերութեան 313 ր. 5 կոպ.

---

8 Փետր. Դուշէթի Աղէքսանդր քահ. տէր Յովհաննէսեանց, յետ